

Ա.ԲՐԱՀԱՄ ԲԱԽՇՈՒՆԻ

ԵԱԿԱԿԱՐԵԼԾՈՒՅՈՒՆՆԵՐ

Ա.ԶԵՐՆԵՆՔ - 1948

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗДНЕЕ
указанныого здесь срока

89
ИРБ

Колич. пред. выдач _____

ԱՐԱՀԱՆՄ ԲԱԽՇՈՒՆԻ

891.99

F-28

ՏԵՂՄԱՆԴԱԿ 1961 թ.

ԲԱՆԱՍԵՂ ԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

+4.33+

11
27051



ԱԶԵԲՆԵՇՔ



1948

22
15



Մ Ե Ր Ս Ր Ե Ր Ը

Եռազողում են արեգնակայլ մեր սրերը հրածին,
Մեր սրերը կալծակնեղեն, շանթի հրավ ջրպեղված.
Փողփողում են դրաշները, դրաշները արնածին,
Դրոշները մեր արնաբարբ, մեր սրերով նվաճված:
Եվ շողացին նրանք պայծառ գոռ ու դաժան մարտերում,
Կյանքը նրանց հովանու տակ դարձավ առև մի անշեց,
Կյանքի անշեց հովարը վառվեց մեր բոցավառ սրտերում:
Եռազողում են մեր սրերը, մեր սրերը փրկարար,
Մեր սրերը արդարության, խաղաղության պահապան.—
Ու պես պիտի շուշան նրանք մինչեւ աշխարհում արար,
Զձառագի արդարության արևը վառ, անման:



Կ Ա. Ռ Ո Ւ Ց Մ Ա. Ն Ե Ր Գ

Մենք քրտինքով ենք շաղախել ցեխսը մեր այս նոր շհնքի,
Մեր կամքի կարծրությունն ենք տվել նրա պատին.—
Հուսավառել ենք, շենքը այս շողերով արեգակի,
Կանգնեցրել դրոշը եզրայրության նրա ճակատին:
Հղկել ենք ամեն քարը նրա, որ ոչ մի խոռոշ վինի,
Եվ ոչ մի թունավոր իժ շծվարի նրա պատում,
Որ սրտերը մեր ցնծան ու կյանքը մեր խաղաղ լինի,
Եվ խնդությունը մեր հորդի աղբույրի պես անհատնուամ՝
Ահա բարձրանում ենք նրա լուսավառ սանդուխքներով,
Մի պահ հիշելով մեր անցած երկար ու դժվար ուղին,
Հեշտ շի եղել մեզ համար, մենք այս անցել ենք պայքարով,
Մեր սրտերում հրովարած սերը հայրենական հողի:
Մեր պայքարի ու կառուցման այս երկար ճանապարհին
Քանի անգամ ոխակալ թշնամին է ելել մեր դեմ,
Ելել է նա հրանոթներով մահագուժ, տանկերով հրեշային,
Եվ հանդինել է մեր լուսակերտ շենքը հիմքից քանդել:
Բայց բախվել ենք մենք արիաբար թշնամու բանակներին,
Մեծ առաջնորդն է տարել մեզ հերոսական մարտերի,
Եվ միշտ էլ հաղթել ենք մենք արյունաբրու ոսոխներին
Մեր հզորագոր զենքով, ցասման հրով մեր սրտերի:
Արդ, բարձրանում ենք մենք սանդուխքներով կոմունիզմի,
Ստալինի պայծառ հանճարն է մեր ուղին լուսավորում,
Մեզ հովանի է փառապանծ դրոշը լենինիզմի,
Լենինյան դրոշն է մեզ հար պայքարում ոգևորում:
Ու հավատարիմ լենինյան-ստալինյան դրոշին հրավառ,
Մենք կոմունիզմի շքեղ շենքն ենք կառուցում,
Կառուցում ենք մենք այս շենքը լուսե, ուժով մեր համառ,
Կամքով մեր արի, որ թրծել ենք Հոկտեմբերի բոցում:
Եվ մեր կառուցման ու երթի այս մեծ ճանապարհին,
Մեզ լուս է տալիս միտքը պայծառ իմաստուն
առաջնորդի,
Եթե փորձի նորից ելնել մեր դեմ անարդ թշնամին,
Կոնչանա նա ամենազոր ուժից իմ ժողովրդի:

Ի Մ Զ Ա Յ Ն Ը

Ինձ գիտե իմ երկիրը մեծ,
 Լսել է նա ձայնս հզոր,
 Նա գիտե իմ սիրավը անեղծ,
 Ել ուժը իմ ամենազոր:
 Նա լսել է ձայնը իմ, երբ
 Տվել եմ այն առաջնորդին
 Ել իմ ուժն է տեսել նա, երբ
 Պաշտպանել եմ ժողովրդին:
 Նա տեսել է ինձ մարտերում,
 Նենդ թշնամու դիմ կովելիս,
 Նա տեսել է ինձ արտերում,
 Առատ հացը մեր հնձելիս:
 Նա գիտե իր քաղաքացուն,
 Իր որդուն նա ճանաչում է,
 Ուր ոտք դնեմ, վարդ է բացվում,
 Քարնձէլ անգամ կանաչում է:
 Ես մարդ եմ, ես քաղաքացի,
 Գիտեմ կյանքի իմաստը մեծ,
 Երբ կյանք մտա աչքս բացի,
 Ես աշխարհը տեսա իմ մեջ,
 Ես մարդ եմ, ձայն ունեմ ազատ,
 Չայնս կտամ նրանց, ովքեր
 Հայրենիքին իմ հաւագատ
 Կրերեն կանաչ գարուններ,
 Ովքեր կտան իրենց ուժը:
 Իմ երկրի փառքի համար,
 Որ էլ շիցնի ամպն ու մուժը,
 Մեր երկրին արևավառ:
 Ես մարդ եմ, ձայն ունեմ ազատ,
 Չայնս կտամ նրանց, ովքեր
 Իմ Հայրենիքին հարազատ
 Կրերեն բազում փառքեր:



ԼԻՌԻԹՅՈՒՆ

Լիությունն է ուսմանում ոև ցելերի մեջ հիմա,
Հասկերի հետ ոսկեհեր վաղը պիտի ծփա նա:

Վաղը պիտի ալիքվի օվկիանի հետ արտերի,
Լիությունը հորդահոս հույզերի պես սրտերի:

Պիտի անուշ խշոցով ցորենի հետ քաղցրաբույր
Նա ներս հոսի տները ոնց անսպառ մի աղբյուր:

Լիությունը իմ երկրի, Հայրենական իմ հողի,
Աճել է մեր քրտինքով ողկույզ դարձել խաղողի:

Հոսում է նա արտերից ու դաշտերից քամբակի
Եվ հորդանքով ներս մտնում դոնով գյուղ ու քաղաքի

Լիությունը իմ երկրի, որ վարար է ինչպես գետ,
Հերոսներից անբաժան, շրջում է միշտ նրանց հետ:

Մով քրտինքով է բերվում լիությունը աշխարհի,
Լիությունը ծնունդն է աշխատանքի, պայքարի:

Լիությունը չի հատնի Հայրենական մեր հողի,
Փա՛ռք մեր հողին ու զրին՝ մեզ լիություն տվողին:



ԵՐԳ ՄԵՏԱՂԻ ՄԱՍԻՆ

Մ' ենք այս մետաղից զենքեր ենք կոփել, զբահ ենք կռել,
Եւլ արյունահեղ, դաժան մարտերում մենք մեղ պաշտպանել:

Մ' եր այս փրկարար, զորավոր զենքի հովանու ներքո,
Մ' եր խնդում կյանքի սոխակն է անուշ դաշլայլով երգում:

Եվ խաղաղության աղավնիները խմբերով ահա;
Թառել են հանգիստ մեր արեգնափայլ սրերի վրա:

Մ' ենք այս մետաղից ճամփա ենք շինել անապատում լերկ,
Որ գնացքները մեր երթևեկեն գիշեր ու ցերեկ:

Նավեր ենք շինել մենք այս մետաղից կարծը ու անգին,
Որ մենք նավորդենք շրերում մեր լուրթ՝ ուրախ, խնդագին:

Եվ սավառնակը այն ճերմակաթև կապույտ երկնքի,
Անշարժ ու անձև մետաղ էր ընկած խորքում հանքերի:

Օ, այս մետաղը երեկ ընկած էր Հողի ընդերքում,
Խակ այսօր նա մի տրակտոր դառած արտերն է Հերկում:

Իմ հայրենական աղատ աշխարհի հեռու մի գյուղում,
Մետաղե փայլում մահճակալի մեջ մի փոքրիկ մանուկ
Քնած է խաղաղ գալիքի չքնաղ երազն աշքերում:

Այդ նվիրական, այդ կուռ մետաղից շինած հարթուկով
Մի սիրուն աղջիկ իր հարսանեկան շորն է հարթուկում:

Իմ այս գրիչն էլ մետաղ էր անձև, բայց մարդու ձեռքով
Գրիչ է դարձել խոսում է ինձ հետ տառերի բերնով:

Այդ ձեր շանքով է ձև առել մետաղն իմ հայրենիքի,
Մետաղահաններ, խառաւ ու դարբին, ընկերներ անգին:

Հ Ա Խ Շ Ա Բ Ջ Ա Ն

Ալեքսանդր Մատրոսովի հիշատակին

Աջա և արյան հետքը ալ-կարմիր,
Սև ժապավենը քարերի վրա,
Եվ պսակները թարմ ծաղիկների
Դրված մարտիկի շիրիմի վրա:

Մենք խոնարհում ենք գյուղները մեր
Զոհված զինվորի շիրիմի առաջ,
Նա՛, որ իր մահով փրկեց կյանքը մեր,
Մեզ համար զոհեց իր կյանքը կանաչ:

Այս հողաթումբը, շիրիմն այս անգին,
Օ՛, փառաբանվի պիտի դարերում,
Երգերում պայծառ՝ չքնաղ զալիքի,
Եվ սերունդների խորունկ սրտերում:

Վաղը, ես զիտեմ, այստեղ սկս կանգնի
Մարմարե քարից հուշարձան մի մեծ,
Եվ շուրջը նրա ծաղկավառ այդի,
Ինքը՝ դինվորը կանաչ այգու մեջ:

Կգան օրերը վառ, լուսակարկաչ,
Կհանդիպենք, ընկեր, այստեղ մենք կրկին,
Այստեղ, այս այգում հավիտիան կանաչ,
Հուշարձանի մոտ վսեմ ու անգին:

Եվ այն զինվորը անմեռ ու արի,
Դարերի ճամփին հուշարձան դարձած
Կժպտա հավերժ ժպտով արևի,
Այս կանաչ այգում հպարտ բարձրացած:



ԽԵԴԻՌԻԹՅՈՒՆ

Խնդությունը մտավ ներս, ծիծաղի հետ իմ մանկան,
Գարնան հով ու զովի հետ, բուրմունքի հետ վառ ծաղկանց:
Նա մտնում է արտերը ժպտում ոսկե հասկերին,
Ծիածանի պես պայծառ շողում մեր ջինջ աչքերին:
Խնդությունը ամեն օր մեր քաղաքներն է մտնում,
Կյանքի խնդուն աշքերով բարի՝, բարի՝ մեզ ժպտում:
Նա մտնում է հանգերը. և հորերը խորախոր,
Խնդությունը առանց մեզ. օ՛, չի ապրի ոչ մի օր:

1948 թ.

ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Կովկասյան մեր վեհ լեռների գրկում,
Հողաթմբի տակ այն սուրբ ու փոքրիկ,
Երեք մարտիկ են անխոռվ հանդշում,
Երեք ընկերներ հարազատ, մոտիկ:

Նրանք երեք են, երեք կտրիձներ,
Երեք արծիվներ Կովկաս լեռներից,
Որ ընկան հանուն ազատ հողի մեր,
Սրտերով խորունկ, սրտերով անբիծ:

Եվ որպես սիրո անմոռաց նշան,
Մնում է այնտեղ դերեզմանը այն,
Իսկ ծեր Կազբեկն էլ վերծի դ, աննման,
Կանգնած է նրանց որպես հովարձան:

Ա Յ Գ Ե Պ Ա Ն Ը

Դու անանց սիրով, ժրաշան ձեռքով
Տնկեցիր տունկը պտղաբեր ծառի,
Ել այդ տունկը քո ճակտի քրտինքով
Զրեցիր, որ նա ծաղկի, կանաչի:

Դու փայլիայել ես փոքրիկ այդ տունկը,
Անվնաս պահել փուշ ու տատասկից,
Ու երբ ամպել է, մթնել երկինքը,
Դու պաշտպանել ես նրան փոթորկից,

Որ փոթորիկը անողորմ ձեռքով
Զպոկի հիմքից քո մատաղ ծառը,
Որ ամեն գարնան իր քաղցր ելքով
Գա ճյուղին թառի սիրուն ծիծառը:

...Մաղկել է հիմա ծառը քո տնկած,
Այդիդ լցվել է նրա բուրմունքով,
Հասակ է առել և ճյուղատարած,
Ժպտում է նա քեզ իր առատ բերքով:

ՀԱՅԻ ԲՈՒՅՈՒՆ

Ես մանկությունս եմ հիշում,
Օրերը տխուր, անկեզ,
Մեր գետը, որ այնպես վշշում,
Սրցունք եր թափում ասես:

Մեր հյուղն եմ հիշում մութ, անլում,
Եվ մեր թոնիրը հանգած,
Աղքատ իմ մողը, որ անհույս
Շըշում էր հանգերն ընկած,

Բանջար ու սինձ էր քաղում մայրս,
Մութի հետ դառնում էր տուն,
Ա՛խ, վաղուց չկար իմ հաւրը,
Մենք որբ էինք անխնդում:

Թայց հարևանը մեր Բակոն,
Հարուստ էր, անզութ էր նա,
Համարյա ամեն երեկո,
Վառվում էր թոնիրը նրա:

Վառվում էր թոնիրը նրա,
Ցորեն հաց էին թխում
Ու տանում թախտի վրա,
Ճերմակ հացերը փռում:

Ա՛խ, մենք որբ ու աղքատ էինք,
Եվ հացը մեզնից հեռու.
Ես միշտ մորս ասում էի,
— Թոնիրն ինչո՞ւ չես վառում:

Ու մայրս զսպում էր մի կերպ
Լացն ու արցունքը իրա,
Եվ անիծում էր. — մինչև երբ
Աշխարհն այսպես պիտի մնա:



* * *

Հիմա ուրախ է իմ մայրը,
Մեր թոնիրն է վառվում.
Ել չի արտասկում իմ քույրը,
Մենք հարուատ ենք ապրում:
Շնչում եմ բուրր հացի,
Համայնական մեր դաշտերի,
Ես հպարտ քաղաքացի
Սովետական աշխարհի:


Հ Ի Շ Ա Ս Ա Կ

Իմ Ղարաբաղի չքնաղ աղջիկնե՛ր,
Դուք ձեր գեղությամբ ինձ շատ եք գերել,
Ուր էլ որ լինեմ, ուր էլ հեռանամ,
Ես երբե՛ք, երբե՛ք ձեղ չեմ մոռանաւ:
Սիրուննե՛ր, ձեզ ի՞նչ թողնեմ հիշատակ,
Ես ոչ ալ վարդ եմ, ոչ էլ մանուշակ,
Որ իմ բուրմոնքով լինեմ գաշտ, անտառ,
Բացվեմ ձեզ համար գարուն ու ամառ:
Ոչ էլ ամպեկ եմ, որ գամ ու փարփեմ
Չեր քնքուշ վզով, կարոտա առնեմ,
Ոչ էլ ծաղիկ եմ, որ բացվեմ, բուրեմ,
Արև չեմ, որ ես ձեզ ջերմ համբուրեմ:
Բայց ես պահտ եմ, երգիշ մի ջահել,
Ուղում եմ ես էլ ձեր զովքը երգել.
Որ իմ երգերը վճիտ ու հստակ,
Մնան ձեր սրտում իբրև հիշատակ:



ԻՄՀԱՅՐԵՆԻՔԸ

Իմ հայրենիքը ծաղկած մի գարուն
Երկինքը նրա զինջ ու աստղավառ,
Գետերը նրա հորդ ու վարարուն,
Լեռներն անառիկ, սեպ ու վեհափառ,
Իմ սեպ, վեհափառ հայրենիքն է սա:
Իմ հայրենիքը ծաղկունքի մի փոռնչ,
Անուշ բուրմունքով բուրում է անվերջ,
Բոլոր ազգերի մարդիկ անտրտունչ,
Ապրում են այստեղ սիրով մի անշեց,
Իմ անշեց սիրո հայրենիքն է սա:
Իմ հայրենիքը նոր է ու ջաճել,
Երեկ բոլորեց երեսուն տարին,
Նա մի փարոս է, բոցավառ ջաճ է,
Վառված աշխարհի մթին ձամբեքին,
Իմ փարոս ու ջաճ հայրենիքն է սա:
Իմ հայրենիքը կանգնած է ահա
Անառիկ անհաղթ ամրոցի նման,
Նա խաղաղության պատվարն է հիմա
Եվ հույսն ու հավատն ամրողջ
մարդկության,
Իմ հույսի, լույսի հայրենիքն է սա:



ԱԶ, ԴՈՒ ԿՈՒՅՐ ԶԵՍ

Երկու սև խոռոշ աշքերի տեղ,
Այտերին երկու, երկու սև սպի,
Նա չի տեսնում ոչ աստղերը լուսե,
Ոչ էլ քարավանը գարնան ամպի:

Նրան տանջել են ոսոխները բիրտ
Պարտիզանուհուն այն քաջարի,
Հանել են նրա աշքերը ջինջ
Չի հայտնել սակայն ոչ մի գաղտնիք...

Քայլում է նա միշտ մեր փողոցով,
Քայլում է խաղաղ, այնպես խոհուն,
Խոնարհվում եմ ես ակնածանքով
Ամեն տեսնելով հերոսուհուն:

Շրջում է սրտով նա սիրակեզ,
Սրմի շողից դեմքն է փայլում,
Բոլոք կույրերն են արդյո՞ք այդպես,
Թե միայն նա է հպարտ քայլում:

Օ, դու կույր շես, իմ հարազատ քույր,
Չորս հարյուր միլիոն աշք ունես դու,
Այդ աշքերով պայծառ ու բյուր
Անգամ գալիքն ես տեսնում խնդուն-



ԵՐԴՈՒՄ

Երդվում եմ մեր զինջ, կապույտ երկնքով,
Մեր սեղ սարերի ալվան ծաղկոնքով,
Մեր սուրբ դաշտերի սրբազան հացով,
Որ ձեր սեղը միշտ իմ հոգում պահած,
Զեր գովքը կանեմ, ձեց հետ միշտ կապված:

Երդվում եմ ահա ես ծունկի շոքած
Մեր ձյունապսակ լեռների առաջ,
Երդվում եմ ես քեզ ժողովուրդ իմ մեծ,
Որ իմ քնարով, երդերով անկեղծ,
Ես փառքի կերդեմ, գարունդ կանաչ:

Երդվում եմ ես քեզ, իմ մայր Հայրենիք,
Իմ սովետական հերոս Հայրենիք,
Որ քո մեծ ու վեհ երթին թևավոր,
Արյունս կտամ, ուժերս բոլոր:



ՅՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՄԱՍԻՆ


Խոսքդ Հատու, արդարացի
Ու հարազատ մեր սրտերին,
Ինչպես շողը լուսաբացի,
Լույս ես սփռում դու աշխարհին:

Խոսքդ Հատու նետի նման
Խոցել գիտե նենդ թշնամուն,
Մտքերդ Հորդ գետի նման,
Բոլշևիկյան Հզոր մամուլ:

Մեզ Հետ ես միշտ, մեր պայքարում,
Մեր խնդության պայծառ պահին,
Կոլխոզներում ու Հանքերում,
Մեծ կառուցման ճանապարհին:

Թշնամու դեմ մարտադաշտում,
Խոսքի նման պայթել ես դու,
Քեզ որքան ենք սիրում, պաշտում,
Բոլշևիկյան մամուլ Հատու:

Խոսքդ պայծառ ու թանկագին,
Դու պարտիայի դենք սըրազան,
Ողջույն, ողջույն քո բանակին,
Քո բանակին բազմահազար:



ԵՂԵՎՆԻՆԵՐ


Դուք եղեվնինե՞ր հավիտյան կանաչ,
Կրեմլի պատի տակ ուրախ ու խնդուն,
Երանի ձեզ, որ տեսնում եք նրան,
Առաջնորդին մեծ, արև այն մարդուն:

A 27051
14.33
Հսում էք ձայնը նրա քայլերի,
Տեսնում եք նրա ժպիտը վառման.—
Կուզեի ձեր մի ճյուղը լինեի,
Ես էլ իմ աշքով տեսնի նրան:

Տեսնեի նրան անանց կարոտով,
Լսեի ձայնը նրա հալրական,
Եվ ժպիտները բարի լոսաթով,
Ժպիտները այն վառ, արեգական:

Դուք եղենիներ, ծառե՞ր աննման,
Կրեմլի պատի տակ ուրախ ու խնդուն,
Երանի ձեզ, որ տեսնում եք նրան,
Առաջնորդին մեծ, արև այն մարդուն:






Ա Յ Ս Գ Ի Ր Ք Ը

Այս գիրքը դրել է նա,
Առաջնորդը իմաստուն.—
Ամեն մի տողում նրա
Կա արդար մի պատմություն:

Այս գիրքը մեր արյունն է,
Ու մեր զանքն է արդար,
Այս գիրքը մեր ավյունն է,
Մեր քրտինքը զինջ ու գոհար:

Այս գիրքը պայքարն է,
Եվ խիղճը արդարադատ,
Սա մեր ուժն է, կամքն է մեր,
Եվ ոգին վսեմ, անպարտ:

Այս գիրքը օրենքն է մեր,
Մեր օդը, ջուրը, հացը,
Սա անցած ուղին է մեր,
Ու մեր չինջ լուսաբազը:



Կ Ի Ն

Ես նետված աճեղ մարտի բոցի մեջ,
Կուրծքս դեմ արած շարագուժ մահին,
Վտանգի պահին սիրով իմ անշեշ
Միշտ քեզ եմ հիշել, աննման իմ կին:
Ես, որ պառկել եմ խոնավ դիրքերում,
Ճերմակ ձյունի մեջ, ձմռան ցրտերին,
Ինձ հետ է եղել, հոգուա խորքերում,
Քո սիրտը մաքուր, քո սիրտը չերմին:
Քեզ հիտ եմ եղել հոգով ու սրտով,
Քո պայծառ սերն է ինձ մարտի մղել,
Միշտ խաղաղ ժամին, գրոհից հետո,
Սիրտս թև առած քեզ մոտ է թռել:
Քեզ մոտ է թռել սեր իմ քնքանոմ,
Դաշտերը մեր լայն ուր որ գու երեկ
Վար էիր անում, սերմ էիր ցանում,
Հունձ էիր անում գիշեր ու ցերեկ...
Ու հետո ձմռան ցուրտ գիշերներին
Ելիկ ես մանել, գուլպա ես գործել,
Հիշել ես անցած օրերը մեր հին,
Եվ նուրբ թելերը արցոնքով թրջել:
Ու երբ լոել է որոտը աճեղ
Եվ խաղաղության արևն է փայել,
Գու բարի սրտով, ճակատով լուսեղ,
Իմ վերադարձի ճամբան ես պահել:



Մ Ա. Յ Ր

Ես մայր չունեի և դու մայր դարձար,
իմ ստալինյան աղատ Հայրենիք,
Անցան իմ հոգուց տրտմություն ու ցավ,
Ու կյանքս դարձավ քեզնով երջանիկ:
Ես քո քաջարի զինվորն եմ հիմա,
Քո ծիլը աճող, որդիդ հարազատ,
Տե՛ս, հոգիս վառած քո փառքով, իմ մայր,
Հսկում իմ արթուն քո երթը աղատ:

Օ Ր Ո Ր Ո Յ Ի Ե Ր Գ

Մութն է ընկել հողին, ջրին,
Մեր սայրերին հինավուրց.
Արագիլն էլ ահա ծառին
Քուն է մտել շատ վաղուց:

Հայրդ հիմա արթուն զինվոր,
Սահմանապահ քաջարի.—
Հսկում է նա գիշեր ու դօր
Անդորրը մեր աշխարհի:

Գիշերը նա առանց քնի,
Հսկում է, որ դու քնես,
Որ քո քունը անուշ լինի,
Այ իմ փոքրիկ լուսերես:

Դե՛, քնիր դու մուշմուշ քնով,
Օրոր ասեմ մեղմանուշ.
Հայրդ հիմա անքուն աշքով,
Հսկում է քո քուն անուշ:



ՍՐՏԻՄ ԳԱՂՏՆԻՔԸ


Ընկերներիս հետ կրվից տուն դարձա,
Թես տակ բռնած երգերիս զիրքը,
Սիրած աղջիկս եկավ, մրտեցավ,
Սիրտը կարտովլ ու սիրով լիքը:

Եկավ բարևեց բարևով անուշ,
Ասես ինձ ժպտաց մեր չինչ երկինքը,
Նա կարոտ սրտով, սիրով քաղցրանուշ,
Կարդաց մարտերում զրած իմ զիրքը:

Կարդաց նա զիրքս, սիրոս սիրավառ,
Իմ հոգում ծփաց սիրո ալիքը,
Չորեքում հոսող մեր զետն էլ վարար,
Վաղուց զիտեր իմ սրտի գաղտնիքը:

Ե Ր Գ Ե Ր Ս

Ես երգերս զրեցի ահեղ ու գոռ մարտերում,
Գնդակների վզզոցով ձայնազրեցի ես նրանց,
Նրանք չունեն մեղմ ու նուրբ դայլալին իրենց հանգերում,
Քանզի նրանց զրել եմ խրամատում ես պառկած;
Վարդաշրի փոխարեն արյունով եմ ես թրջել,
Նրանք չունեն բուրմումքը քնքշագեղ վարդերի:
Եմ երգե՛րը, երգե՛րը մարտադաշտում են ծնվել,
Նրանց օրոր է ասել շառալյունը արկերի:



ԱՐԴՅՈՒՔ ՆԱ. ԻՆՉ ՀԻՇՈՒՄ է

Հիմա խավար գիշեր է, բարակ անձրև է մաղում,
Դիրքում արթոն ես նստած, անտառն էլ խով խշում է,
Այն աղջիկը սկաչա, որ թողեցի մեր գյուղում,
Տեսնես ի՞նչ է անում նա, արդյոք նա ինձ հիշո՞ւմ է:
Ես հիշեցի սարերը, մեր այն սիրուն արտերը
Եվ այն շքնաղ աղջկա անուշ երգն ու բառերը...
Երբ գուրս եկա մեր գյուղից մի մրգառատ աշուն էր,
Տեսնես ի՞նչ է անում նա, արդյոք նա ինձ հիշո՞ւմ է:
Գրտեմ, հիմա ծաղկել է մեր գետափի վարդենին,
Ու մեր գետը հորձանուտ էլի էնպես վշշում է,
Տեսնես ի՞նչ է անում նա, արդյոք նա ինձ հիշո՞ւմ է:
Ահա լուս ու անշշուկ ես նստած եմ իմ գիրքում,
Եմ հոգու մեջ, սրտիս հետ, նրա սերն եմ ես երգում,
Նրա սերը վառ, անմար ինձ ձգում ու քաշում է,
Տեսնես ի՞նչ է անում նա, արդյոք նա ինձ հիշում է:
Դուք գնում եք զով հովեր, դուք թոշում եք այ հավքեր,
Դուք անցնում եք սար՝ ու ձոր, դուք տեսնում եք շատ
գյուղեր,
Գուցե՞ գնաք մեր գյուղը, մեր հանդերը նախշուն են,
Տեսնեք նրան հարցրեք՝ արդյոք նա ինձ հիշո՞ւմ է:

4 U. P. 3 U.

Ես հիշեցի մարտերը, մեր մարտերը դժնդակ,
Դոնը, Նեմանն հիշեցի, ստեպները ընդարձակ,
Ընկերներիս հիշեցի, խրամատը մեր խոնավ,
Եվ լեռները Կարպատյան, անտառները մութ ու թափ:
Ես հիշեցի Վարյալին, ընկերություն քաջարի,
Նրա կապույտ աշքերը, խոպոպները վարսերի,
Մեր մարտկոցը հիշեցի և պայթյունը արկերի,
Եվ այն խավար գիշերը, որ թաղեցինք Վարյալին:
Նա մի չքնաղ աղջիկ եր, մեր գթության քույրն եր նա,
Մեր վերքերը կապելիս ծանր վերքից մեռավ նա:



Գ Ի Տ Ե Մ Կ Գ Ա Ա

Մեր անջատման այն վեհ ժամին

Մենք սիրու բացինք իրարու,

Մեզ լսեցին աշնան քամին,

Աշնան այգին ու առուն:

Ես քեզ սիրու խոսք ասացի,

Վկա եղան արտ ու դաշտ,

Աշնան առավա ցող ու թացին

Քեզ ճամփեցի կռվի դաշտ...

Ահա հաղթել, տուն ես եկել,

Աշուն է և լիություն...

Կարծես դու ես հեռվից պոկել

Այս աշունը բերել տուն:

Գ Ա Ր Զ Ե Լ Ե Մ Տ Ո Ւ Ն

Դարձել եմ տուն, դարձել եմ նորից

Նույն ճամփով ծանոթ ու հին,

Կարծես նոր եմ ծնվել ես մորից,

Ես մանուկ՝ մորս գրկին:

Նույն բարդին է մեր դուան խշում,

Բարդին մեր երկնասլաց,

Նույն գետն է՝ թարթառն է մեր վշում,

Ճրերով իր փրփրակալած:

Ճեզ համար գետ իմ, իմ բարդի,

Մանկության իմ ծանոթներ,

Մի օր ելա ահեղ, գոռ մարտի,

Որ հավերժ լսեմ ձայնը ձեր...




Ա Ն Զ Ր Ե Վ Ի Ց Հ Ե Տ Ո

ի՞նչ լավ է լինում անձրեկց հետո,
Երբ ծաղիկներն են նազանքով ժպտում,
Երբ ծիածանը կամար է կապում
Մեր ջինջ ու պայծառ կապույտ երկնքում,
Անձրեկց հետո ի՞նչ լավ է լինում,
Արտերն են մնում հանգիստ ու խաղաղ,
Հավերն էլ իրենց բնեջն են շինում
Ծառերի վրա կանաչ, ոսկեցաղութեան
Մեղոն հերձեան թոշում է հեռու,
Կույս ծաղիկներկց նեկտար է քաղում,
Երգում են անուշ աղբյուրն ու առուն,
Սարերում մարմանդ հովերն են խաղում:
Անձրեկց հետո ի՞նչ լավ է լինում,
Մի թոփիշ բույրով հողն է շունչ քաշում,
Ու վարարում են, ափերից ելնում,
Գետերը մոլի, գետերը վշշում:
Անձրեկց հետո ի՞նչ յամ է լինում,
Արևն է ժպտում աշքերով հրակ,
Երկինքը անամապ ու ջինջ է մնում,
Մեր սրտի նման վճիտ ու հստակ,
Անձրեկց հետո ի՞նչ յամ է լինում:

* * *

Այս գարնան ինչքան վարդեր
Պիտի զվարթ բացվեն,
Այս գարնան քանի սրտեր
Պիտի սիրով լցվեն:

Այս գարնան քանի գութան
Պիտի հողը հերկի,
Քանի անգամ այս գարնան
Սիրոս պիտի երգի...



Գ Ե Ղ Ե Յ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Թե Ախներ ծաղիկը,
Սարի սիրուն հղնիկը,
Գեղեցկություն չէր լինի:

Գեղեցկություն չէր լինի,
Թե Ախներ անտառը,
Ծառը կանաչ, ծիծառը:

Գեղեցկություն չէր լինի,
Թե Ախներ մայր հողը,
Ցողը, շողը, խաղողը:

Գեղեցկությունն աշխարհի
Մարդու խելքով է բերվում,
Մարդու ձեռքով է բերվում,
Գեղեցիկը աշխարհի:

Գեղեցկությունն աշխարհի
Մարդը ինքն է քաջարի:



* * *

...Բայց միթե՞, միթե՞ սերը կմարի
Անդամ շիրիմում, սառը հողի տակ,
Չե՞ որ մայր հողն է մայրը սերերի,
Եվ նա է մեզ կյանք, սեր տալիս հստակ:
Օ՛, ու չի մարի սերը հողի մեջ,
Աղջիկը հողում ծաղիկ է դառնում,
Ծաղիկն էլ քնքուշ, սիրով մի անշեշ,
Իր սեր-բուրմոնքով աշխադրն է առնում:
Եվ ամեն անդամ ծաղիկ տեսնելիս,
Թվում է, թե այն աղջիկը մեռած,
Ինչ որ հրաշքով մի ծաղիկ դառած,
Իր անուշաբույր սերն է ինձ տալիս:

ԶՅՈՒՆ ՈՒ ԱՂԱՎՆԵՐ

Օ՛, դուք փաթիւներ առաջին ձյունիւ
Որ այդպես հանդարտ թափիլում եք կրկին,
Նման դուք ճերմակ աղավնիների,
Եկել եք իշել իմ տան տղանիքին:
Սիրում եմ ես ձեզ ձյուն ու աղավնի,
Ընկեր եք եղել դուք ինձ մարտերում.
Դո՛ւք հարազատներ, ծանոթներ իմ հին,
Աղավնի ու ձյուն չե՞ք մտաբերում:
Չյունը իր տաքուկ վերմակն էր փռում
Մարտադաշտերում յայն ու հողմագար,
Իսկ դու աղավնի այն դաժան կռում
Սուրհանդակ էիր դարձել մեզ համար:



ՄԻ ՀԱՎՔ ԵԿԱՎ ՀԱՐԱՎԻՑ:

Մի հավք եկավ հարավից,
 Թեին տալով, հեալով,
 Մի գիր բերեց իմ մորից,
 Գրված լուսե մատներով:
 Ազիզ, անուշ իմ մորից
 Գիր ստացա թանկադին,
 Բարենում է մայրն ինձ,
 Մրտի խորքից կաթոգին:
 —Բարե, որդի, սիրելի՛ս,
 Այս ինչ բախտի տիրացա,
 Այսօր արտը գնալիս
 Ուրախ մի լուր իմացա:
 Ես մեր թերթում կարդացի,
 Որ հերոս ես դարձել դու.
 Խնդությունից ես լացի
 Մեր արտերի մեջ ծփուն:
 Քո մոր սիրտը կարոտով
 Սպասում է քո դարձին.
 Գիտեմ կզան դու շուտով,
 Քեզ կսեղմեմ իմ կրծքին:
 Քեզ կսեղմեմ իմ կրծքին
 Կհամբուղեմ զերմագին,
 Մեռնեմ ես քո հաղթ դարձին,
 Դու իմ հերոս, իմ անգին:
 ...Մի հավք եկավ հարավից,
 Թեին տալով, հեալով,
 Մի գիր բերեց իմ մորից,
 Գրված լուսե մատներով:



Կ Ա Ն Զ

Հին դարերից մինչ այսօր,
Մեր դաշտի մեջ, կաղնու տակ,
Մի աղբյուր կա սառնորակ:
Պապիս պապը օ՛, մի օր
Հոգնած, քրտնած բարկ տոթից,
Եկել՝ նստել կաղնու տակ,
Ջուր է խմել աղբյուրից:
Ջուր է խմել աղբյուրից,
Պապս զառամ, ալեհեր,
Ջուր ենք խմում աղբյուրից
Մենք էլ թռոներ ու ծռոներ...
Այն աղբյուրը կաղնու տակ,
Միշտ վճիտ է, սառնորակ,
Տարին բոլոր կարկաշում,
Մեզ է երգով նա կանչում:
Թող որ անվերջ կարկաշի,
Մեր աղբյուրը հայրենի,
Անուշ ձայնով մեզ կանչի,
Կանշի՛, կանշի՛ ու կանշի՛:

Փ



ՀԱՐՑՐԵՔ ԱՐԵՎԻՆ

Մենք պտտվում ենք արևի շուրջը,
Արեք նստած երկնային գահին,—
Ջոռամ է նա մեզ քայլերն ու շունչը,
Մեզ է հետևում նա ամեն պահին:

Տեսնում է նա մեզ հրեղեն աշքով,
Եվ իր շողերով շափում մեր ուղին,
Մեղ կյանք է տալիս անմար կրակով,
Ու շունչ է տալիս անդամ նա հողին:

Արևն արդար է, հարցըք արևին,
Արդար ենք մենք էլ արևի նման,
Երկիրը մեր լուս, ընդդեմ խավարի,
Շողում է ինչպես արեք վառման:

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Ես հսկում եմ լազուրից, քեզ, իմ երկիր լայնանիստ,
Բո շրերը հորձանուտ և հողերդ սրբազն,
Ուր որ մարդն է աշխատում, ապրում խաղաղ ու հանգիստ,
Ուր բացվում են ծաղկի պես բյուր մանուկներ հար ազատ:

Իմ ուժը և ձեռքերը, իմ մեծ պարտիա քեզ նվեր,
Մեծահանձար Ստալին, մեր քաջարի ժողովուրդ,
Զե՞ որ դուք եք ինձ տվել երջանկություն ու թեր,
Սավառնելու քաջաբար մեր երկնքում զինչ ու լուրի:

Իմ բաղեի թևերով ես կթռչեմ ուր ասեք,
Սովետական Հայրենիք, դու մեր պարտիա շինարար,
Իմ բյուրավոր քուրերի, եղբայրների հետ անթեք,
Քեզ համար իմ տոկում ես և ապրում եմ քեզ համար:

ԵՍ ԶԻՒՎԱՐ ԵՄ . . .

Ամառ է: Կեսօր է: Ես ծառի շվաքում,
Իմ մարտական շինելն եմ սիրով փռել,
Հեռվում հովիվն է իր սրինգը նվազում,
Այս, այդ նվազի համար եմ ես կռվել:
Իմ գլխավերն ծանոթ իմ ծառն է շրջում,
Կաղնին իմ գարավոր, կաղնին իմ կանաչ,
Մեր գետն է ձորսմ նորից այնպես վշշում,
Ինչպես վշշում էր պատերազմից առաջ:
Ես արտն իմ մտել ահա հնձվոր եմ նորից,
Զինվոր եմ պատեղ էլ, ինչպես որ մարտում,
Ես ետ չեմ մնալ ամենալավ հնձվորից,
Ես պինվոր աշխատափնքի այս ծով արտում:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	կ
Մեր սրերը	8
Կառուցման երգ	4
Իմ ձայնը	5
Լիություն	6
Երգ մետաղի մասին	7
Հուշարձան	8
Խնդրուրյուն	9
Եղբայրական գերեզմանը	9
Այգեպանը	10
Հացի բույքը	11
Հիշատակ	12
Իմ հայրենիքը	13
Ոչ, դու կույր շես	14
Երդում	15
Բոլշևիկյան մամուլ	16
Եղենիներ	17
Այս գիրքը	18
Կին	19
Մայր	20
Օռորոցի երգ	20
Մրտիս գաղտնիքը	21
Երգերս	21
Արդյուն նա ինձ հիշում է	22
Վարյա	22
Գիտեմ կզաս	23
Դարձել եմ տուն	23
Անձրևից հետո	24
* * *	24
Գեղեցկուրյուն	25
* * *	26
Զյուն ու աղավճի	26
Մի հավք եկավ հարավից	27
Կանչ	28
Հարցրեմ արեին	29
Հայրենիքիս	29
Ես զինվոր եմ	30

Փատ. խմբագիր՝ Հ. ՍԱՀՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ռ. ԱՐԶԱԿԱՆ

Подписано к печати 25/X-48 г. В 1 печ. листе 341(2) зн., печати
листов 2, учетно-авторских—1,7.
ФГ 13075 Заказ 1356 Тираж 3000

Типография Об'един. Издательства, Баку, проспект Сталина, 137

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220027051

1 н. 50 կլով.



А. БАХШУНИ

Ш Е И Р Л Э Р

Баки • АЗЭРНЭШР • 1948